



ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, ՏՐ. Մ. Ս. Գաբրիելեան

«ՀԱՅԳԻ» ԽՄԲԱԳԻՐՆ

ԱՌ ՆԱԽԱԳԱՀՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ

Միացեալ Նահանգաց Նախագահն առ Գոնկրէս ուղղեալ իւր տարեկան պատգամագրին մէջ խօսած է նաեւ այդ երկրիս և Թուրքիոյ միջեւ տեղի ունեցած վերջին յարաբերութեանց մասին, և, ի միջի այլոց, ակնարկած է «Հայք» թերթին ու Ամերիկացի դարձած այն Հայոց որք ի Թուրքիա կը գտնուին այժմ։ Պարտանձին համարեցանք այս բարեգէտ առթիւ նամակ մի ուղղել առ Վսեմ. Նախագահ Բլիվլէնտ և համառօտիւ բացատրել նմա Հայոց ձգտումներու բնութիւնն և «Հայք»ի կացքն հանդէպ Սուլթանին։ Նախագահին խօսքերուն և մեր պատասխանին թարգմանութիւնն կը գտնեն ընթերցողք ներկայ թուոյ մէջ։

ԱՌ ԹՂԹԱԿԻՑՍ

Բաղձալի է որ թղթակիցք ոչ միայն լուրեր յղեն մեզ Հայաստանի այլ և այլ կողմերէն, այլ և զանազան գաւառաց ընկերային կազմաւորութեան վերայ հիմնական տեղեկութիւններ հաղորդեն, որպէս զի ընթացիկ դէպքերու խորն ու յատակն յստակ տեսնուի։ Խորքերդէն մեզ ուղղեալ թուղթն ՉԱՐՍԱՆՃԱԳԻ գաւառին վերայ լաւ օրինակ մ'է այսպիսի ուսումնասիրութեանց, որ թէև կրնայ թիւերու մասին անճշդութիւններ պարունակել առ ի չգոյէ ճիշդ վիճակագրութեանց, իրաց ներքին վիճակն ի վեր կը հանէ և է կարի պատուական։

ՄԵՐ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Այս վերջին երկու շաբաթներս ստացանք բազմաթիւ նամակներ որք մոռցունել տուին այն անախորժ խօսքեր զորս գրգռեալումանք ուղղած էին մեզ ամիս առաջ։ Նոր թղթակցաց ոմանք Հնչակեաններ են որք քաջ ըմբռնած լինելով մեր քննադատութեանց ոգին, պարզապէս դարձուցած են իրենց համակրանքն առ «Հայք»։

Այս շատ քաջայերական երեւոյթ է, զի կը ցուցնէ թէ ժողովրդեան մէջ կայ լուրջ անհատներու բաւական մեծ կակ թիւ մի որ զճմարաւթիւն ի վեր կը դասէ քան զկոսակցական պատիւ։

Կամաց կամաց աւելի լաւ պիտի մանան մեր ընթերցողք թէ Թուրք կառավարութեան քաղաքականութիւնն է գրգռելզայս ի տկար ապստամբական խլրտմունս և ջախջախել ու յոգնեցունել զնոսա որպէս զի ո և է տոկուն դիմադրութիւն անելու ոյժ չկարենան պատրաստել։ Պէտք է որ մեր մէջէն կուսակցութիւն մի անխնայութեամբ ծառայէ Դրան այս խորամանկ հաշիւներուն...

Յառաջիկայ թուով պիտի աւելի բացատրեմք թէ ինչ է մեր անելիքն 1894ին։ Մեք զօրաւոր յոյս ունիմք թէ ժողովրդեան բոլոր խոհուն մասն պիտի յարի մեր քաղաքականութեան։



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," Լեն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎՆԵՒԵԿՈՒԹԻՒՆ

Քաջալերական իրողութիւնք. — Միացեալ
Նահանգաց Նախագահին Պատգամագրէմ. թուր
քիա և Հայք. — «ՀԱՅՔ»ի նախակն առ Նա-
խագահն Միացեալ Նահանգաց. — Հայաստան
Ինչպէս որ է. Չարսամեզ. — Նամակ Կ. Պոլ-
սէն. — Թալամած գեղ. — Ամերիկայի Հայերն
Եւ Ք. Դուռն. — Այլ և այլք :

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կոմ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս գրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան : Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց
Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով : Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :

«ՀԱՅՔ»ի ՅԱՋՈՐԴ ԹԻՒՆ

Հայքի յաջորդ թիւն, այսինքն 1894
թուականին առաջին թիւն, պիտի հրա-
տարակուի Յունվար 15ին : 15 աւուր մի-
ջոցն պիտի գործածեմք չորրորդ շրջանին
համար պատրաստուելու և բաժանորդաց
ցանկն ամբողջացած տեսնելու, որպէս զի
առաջին թիւէն սկսեալ կանոնաւոր լինին
յղմունք :

Բաժանորդագրութիւնն նորոգելու մա-
սին մեր արգայ ընթերցողք պիտի հաճին
փութով շարժիլ և մինչև Յունվարի 12ն
մեզ հասցունել իրենց բաժնեգներ, որով
թէ իրենց միանգամ ընդ միշտ իրենց բա-
ժին կատարած կը լինին և թէ՛ զմեզ
բազում աւելորդ նեղութիւններէ և տո-
մարական սրբագրութիւններէ ազատ կը
կացուցանեն :

Լրագրաց բաժանորդագինն կանխիկ և
փութով վճարելն քաղաքակիրթ և բանի-
մաց մարդու գործ է, և մեր ազգայինք
ալ պէտք է այդ մասին ուրիշ ժողովուրդ-
ներէ ետ չմնան :

Անցեալ տարի մերայինք լաւ շարժե-
ցան մեծ մասամբ, այս տարի կը խրնդ-
րեմք որ լաւ ևս շարժին և ամենքն ալ
շարժին :

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Որ ի Միացեալ Նահանգս և յայլ երկիրս՝
չկարացինք շնորհակալութեան նամակներ
յղել այս միջոցիս. պարզապէս անկարելի
եղաւ անել զայդ՝ զբաղմանց անսովոր
բազմութենէն : Ուրեմն հրապարակաւ կը
խնդրեմք որ մեր ազնիւ աջակիցք, թըղ-
թակիցք, օգնող խմբակք և համակրող
ընկերակցութիւնք ընդունին մեր ջերմ
շնորհակալութիւն և հաճին շարունակել
իրենց անձնուէր և անխնայ ձեռնտուու-
թիւն առ մեզ :

Անոնք սր թերթիո առաջին տարիէն
քաջալեր հանդիսացան երբ դեռ վստահ
չէին թէ պիտի կրնար ապրիլ և պտուղ
բերել, միթէ չպիտի՞ յօժարին մեծագոյն
եռանդեամբ խնամ և հոգ տանիլ այնմ որ
ապրած ու մեծցած է իրենց շնորհիւ և
աւելի սննդեան կարօտ է առատագոյն ար
դիւնք տալու համար :

Յառաջ, ո՛ր պատուական աջակիցք
«ՀԱՅՔ»ի, զի յոյս ունիմք տեսնել պը-
տուղն 1894ին :

ՔԱՂԱՆԵՐԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ

Քաղաքներուց է՛ք, Հայեր, զի Ռուսի-
եան թագաւորութեան վերջանալէն ի վեր
մեր վիճակ երբէք այսքան յուսափայլ ե-
ղած չէր:

Ի սկզբան անցեալ դարուն մեր աղգ-
արագապէս կը սահէր անկիման ստորնա-
գոյն դառիթափէն և մերձ էր յեզր կո-
րստեան անդնդին, երբ ի ձեռն Մխիթար
ԱՅՀ հաստատեցաւ աղգային լուսաւորու-
թեան նոր վառարանն:

Եւ հնութեան փոշիներու մէջէն մեր
նախնեաց ընտիր մատենադրութիւնն, գե-
ղեցիկ խորհրդոց ու գեղեցիկ լեզուի ոս-
կեղէն գանձն ընծայուեցաւ աղգին:

Մեր լեզուն որ բարբարիկ բարբառնե-
րու հետ չարաչար զարնուելով վիրաւոր-
ուած կը մեռնէր, լիզեց պատկառանք
Մեսրոպայ և Եղնկայ սուրբ շրթունքն ու
թշկեցա՛ւ:

Վերածնեցա՛ւ, փրկուեցա՛ւ, պայծա-
ռացա՛ւ Հայ լեզուն:

Կեցցէ՛, յաւէ՛րժ կեցցէ Հայոց լե-
զուն:

Եւ ներկայ դարու Հայ Գրիչն նոր մա-
տենադրութեան ինչ յարաճուն հասանք
արտադրած է արդի Հայերէն լեզուաւ:

1794ին ունէինք միայն մէկ լրագիր,
քանի՛ լրագիր ու քանի՛ տեսակ մեծ ու
փոքր հանդէսներ ունիմք այսօր:

Ո՞վ կրնայ համրել մեր ընտիր գրա-
գէտներու և ուսումնականներու թիւն:
Հայ աղգն իւր գոյութեան երկար դարե-
րու մէջ երբէք՝ գրականութեան կողմա-
նէ՛ այսպիսի ոսկեղէն դար տեսած չէր:

Գրական գործունէութեան և ուս-
մանց բազում կեդրոններ, բաց ի վենետի-
կոյ և Վիէնայի Մխիթարեան միաբանու-
թիւններէն, ունիմք այժմ ի Կ. Պոլիս,
ի Զմիւռնիա, ի Տիգրիս, յէջմիածին, և
ուսանողաց ստուար թիւ մի բարձր վար-
ժարանաց և Եւրոպիոյ ու Ամերիկայի գի-
տական մեծ հաստատութեանց մէջ:

Կրթական այս մեծ շարժումն յառաջ
բերած է Հայ հասարակ ժողովրդեան մեծ
գանգուածին մէջ զգալի փոփոխութիւն:
Այն հէք ժողովուրդ որ դարերէ հետէ ա-
ղէտից ու հարստահարութեանց սովորած
ու անզգայ դարձած էր, այժմ կը զգայ

իւր ցաւեր, և բացեր է աչերն:

Ի հարկէ բաց աչքին մէջ ճառագայթ-
լուսոյ կ'իյնան, ինչպէս և աղտ՝ փոթորկի
ժամանակ: Բացուած աչերու անխուսա-
փելի բաժինն է և աղտն: Բայց բժիշկներ
կը բառնան զաղտն յաչաց և ժողովրդեան
սեւտութիւնն նորէն կը յստակի:

Մեր ժողովրդեան զգայուն դառնալն
թէպէտ անկատար և տարտամ կերպիւ,
յոյժ քաղաքական նշան է կենսականու-
թեան:

Ժողովրդեան զգայուն մասն էր որ ի
մէջկոյն ներկայ դարուս պահանջեց և ըս-
տացաւ Աղգային Սահմանադրութիւնն,
իբրև նախափորձ աղգային ինքնօրինու-
թեան:

Այնուհետև աղգն աւելի կրթեցաւ,
մեծացաւ, և ուզեց ինքնօրինութեան ա-
ւելի կարեւոր և բարձր աստիճան մի ի
ձեռն ներսիսի, և յայնժամ Վեհապետն
զայրացած՝ ապտակեց իւր Հայ հպատակ
հաւարակութիւնն և նորա ձեռքէն յետս
յափշտակեց այն Սահմանադրութիւն որով
չէր չատանար նա:

Եւ Հայ Աղգն ասաց—Ա՛ռ, Սուլթա՛ն,
քե՛զ թող լինի Սահմանադրութիւնդ ան-
պիտան:

Ապա Վեհապետն ասաց—Ձեր Պատ-
րիարքն ալ կ'առնում ձեր ձեռքէն, և կը
թողում միայն նորա արտաքին ձեռն ան-
հոգի և անշունչ:

Եւ Հայ Աղգն պատասխանեց—Ա՛ռ,
Սուլթա՛ն, քե՛զ թող լինի Աղգեան Պա-
տրիարքն անպիտան:

Եւ Հայոց խորհող դասն, ուսումնա-
կանք և մշակեալք ասացին ցմիմեանս—
մեք լաւազոյն Սահմանադրութիւն ու լա-
ւագոյն Պատրիարքարան կ'ուզեմք և կը-
նամք ստեղծել մեր աղգի համար:

Եւ «ՀԱՅԻ» թերթն եղաւ աղգային
այդ ըղձից թարգմանն ու բացատրիչն ե-
րեք տարիներէ ի վեր:

Հայոց նոր Պատրիարքարանն պիտի
կաղմուի Աղգին մէջ գտնուած իմաստ-
նագոյն և Հայրենանուէր հինգ կամ տա-
սն անձնաւորութիւններէ, և նիստն պի-
տի լինի Եւրոպիոյ ազատ հողոյն վերայ:

Սուլթանն չպիտի կրնայ այդ կեդրո-
նին դաշխլ ի ծայր մատին, բայց կեդրո-
նն պիտի կրնայ նախ գրչի ծայրիւ նորին
Վեհափառութեան ուղադիր ունկնդրու-
թիւնն գրգռել և եթէ այդ չյաջողի...

այլ գործիով :

Ո՛չ, Սուլթան, չես կարող Հայ ազգն ի լուծութիւն և յանգործութիւն դատապարտել : Ուր կեանք կայ, անդ կը լինի և շարժում, և ուր լոյս կայ, անդ շարժումն կ'առնու վերջապէս փրկաւ էտ ուղղութիւն :

Հայ Ազգն կարելի էր մահացունել երկու դար առաջ, այլ այժմ անհնար է այդ :

Ինքնաճանաչ ժողովուրդ մի չի կըրնար մեռնիլ արտաքին թշնամութեան և հալածանաց հարուածներովն :

Հայ Ազգն կրնայ այսուհետեւ կորնչիլ միայն ինքնասպանութեամբ : Բայց ահա լոյսն կառատանայ, երբայր զեղբայր կը տեսնէ ու կը ճանաչէ, այր ընկերին կ'աջակցի, Հայ Աշխարհն անարդ և անզարդ վիճակէն կ'ելնէ և իրան ու կերպարան կ'առնու, նա այլ ևս աջիւ զձախն չի վիրաւորեր, այլ կ'ուղղուի դէպ ի յառաջդիմութեան ճանապարհ, դէպի փրկութիւն :

Պիտի ապրի՛ Հայութիւն, պիտի փրկուի՛ Հայրենիք :

ԿԵՑՑԷ՛ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՊԼՏԳԱՄԱԳՐԻՆ

ԹՈՒՐԳԻՍ ԵՒ ՀԱՅՔ

Կարեւոր նիւթեր մեր ուշադրութիւն պահանջած են Օսմանեան Դրան հետ մեր յարաբերութեանց մէջ :

Միացեալ Նահանգաց քաղաքացիներու ձեռքով ի Մարդուան հաստատուած Անաթոլիա գոլէճի չէնքերուն միոյն հրկիզումն և մասնակի աւերումն անզսպեալ խուժանի ձեռամբ, և թուրք կառավարութեան առերևոյթ անտարբերութիւնն այս անիրաւութեան, ի հեճուկս իւր պաշտօնէից ոմանց մեղսակցութեանն, պատճառ տուաւ ջերմ ազդարարութեան, որով փոխարինութեան և յանցաւորաց Պատժման խոստում առնուեցաւ : Շէնքերուն եղած փնասուց փոխարինութիւնն արդէն վճարուած է, վերաշինութեան թոյլատու-

թիւն տրուած, դպրոցին ստացուածոց յանուն ամերիկացի տեարցն արձանագործմն ապահովեալ և աղղու պաշտպանութիւն երաշխաւորեալ է :

Միսիոնարական գործով զբաղող անփնաս Ամերիկացի կնոջ մի թրքական Բիւրտիստանի մէջ հարստահարեալ, լինելուն նկատմամբ տեղեկութիւն ստացուած և Բ. Դրան ազդարարութիւն եղած լինելով, թուրք կառավարութիւնն հրաման հանեց որ չարագործներն պատժուին, յանցապարտ պաշտօնեայն պաշտօնանկ լինի, և միջոցներ ձեռք առնուին ի պաշտպանութիւն մեր քաղաքացւոց որք միսիոնարական կամ այլ օրինաւոր գործով կը ըզբաղին այն կողմերն :

Թուրքիոյ կը գանգաւի թէ իւր Հայ հպատակներ այս երկրի մէջ հպատակութիւն կ'ընդունին ոչ որպէս զի անկեղծօրէն նոյնանան մեր ժողովրդեան հետ այլ այն նպատակաւ որ դառնան իրենց ծըննդավայրն և ապստամբութիւն նիւթեն (to engage in sedition) : Այս գանգաւ չէ բոլորովին անհիմն : Այս երկրի մէջ Հայերէն լեզուաւ հրատարակուող լրագիր մի յայտնապէս կը խրատէ իւր ընթերցողներն զինուիլ, կազմակերպուիլ և անխափան գաւառաց մէջ օսմանեան իշխանութիւնն կործանելու մասնակցիլ : Օսմանեան կառավարութիւնն ծանուցած է իւր դիտաւորութիւնն արտաքսելու իւր հողէն այն Հայերն որք 1868էն ի վեր քաղաքացութիւն ստացած են Միացեալ Նահանգաց մէջ :

Վեհապետութեան ստորոգելեաց մին է օտարականաց այս ինչ կամ բոլոր դասերն երկրէն արտաքսել : Այդ իրաւունք մ'է զոր հաստատած է և մեր բարձրագոյն դատարանի սրբագործմամբն՝ սահմանափակ չափով իւրիք՝ ի գործ դրած է Միացեալ Նահանգք : Միացեալ Նահանգաց և Թուրքիոյ միջև քաղաքացիական դաշնադրութիւն չկենալով, մեր դեսպաններն ի Կ. Պոլիս հրահանգ տրուած է որ, ճանաչելով հանդերձ այդ կառավարութեան իրաւունքն ի գործ դնել իւր քաղաքականութիւն ընդդէմ ամերիկացի Հայոց, պարտի պաշտպանել զայնս վարմանց անկարեւոր խոստութենէ :

(«ՀԱՅՔ»-ի ՆԱՄԱԿՆ ԱՌ ՆԱԽԱԳԱՀՆ)

Նիւ-Եորք Դեկտ. 12, 1893

Տէ՛ր Նախագահ,

Ձեր պատգամագիր (Message) առ վեհաժողովն (Congress) ինչ ինչ դիտողութիւններ կը պարունակէր վերաբերութեամբ Հայերէն թերթին զոր կը հրատարակեմ ես ի Միացեալ Նահանգս, և Հայոց՝ որք քաղաքացութիւն ընդունած են այս երկրի մէջ: Ես ինքնս Սուլթանին նախկին Հպատակներէն լինելով (թէ և այժմ Ամերիկեան քաղաքացի լինելու պատիւն ունիմ,) քաջ իրազեկ եմ թէ ինչ ասել է թուրք կառավարութիւն և թէ ինչ են Հայկական ձգտումներ, և առ ի փարատել զթիւրիմացութիւնն նկատմամբ բնաւորութեանն թերթիս, ՀԱՅՔի, և ճշմարիտ միտմանն Հայոց, կը համարձակիմ զհետեւեալն խոնարհաբար յանձնարարել Ձեր Վսեմութեան բարեշնորհ ուշադրութեան:

Թոյլ տուէ՛ք ինձ, Տէ՛ր Նախագահ, նախ զայն ասել թէ կայքն իմ թերթի, բացասորիչ Հայոց ճշմարիտ տրամադրութեանցն, միշտ բարեկամական եղած է հանդէպ Սուլթանին: Ես անհամար անգամներ կրկնած եմ թէ Հայք չեն ուզեր Սուլթանի իշխանութիւնն կործանել: Թուրքիոյ Հայկական գաւառաց մէջ: Նաև շարք մի յօդուածներու մէջ ջատագոված եմ Նորին Վեհափառութեան իշխանութիւնն Հայաստանի մէջ ամրապնդելու լաւագոյն միջոցներն: Եւ ցուցնելու համար թէ այս միջոցներն Հայկական ինքնասիրութենէ ո՛չ, այլ պատմական ճշմարտութիւններէ թելադրեալ են, երկարօրէն դրած եմ առաջի Սուլթանին զօրինակ Զուլիքերիոյ և զՄիացեալ Նահանգաց, թելադրիչ իմաստնագոյն կառավարութեան ի կառավարել, և լաւագոյն քաղաքական կազմակերպութեան ի պահպանել այնպիսի երկիրներ որք, հանգոյն Թուրքիոյ, կազմեալ են զանազան ցեղերէ, կրօններէ և լեզուներէ. — իմաստնագոյն քաղաքականութիւնն վասն զի մի միայն կարող ի պահել ի սրտագին միութեան ընդ կեդրոնական իշխանութեան զպէսպէս ցեղսն, մինչ խիստ բացարձակութիւն ու չափազանց կեդրոնացումն կը միտին քայքայել զայնպիսիս կայսրութեանց. (ՀԱՅՔ թ. 3, 4, և 5, 1891:) Այս ճշմարտութեան տը-

խուր կողմն ապացուցուած է Սուլթանաց կորստեամբ Յունաստանի, Ռումանիոյ, Սերվիոյ և Պուլկարիոյ: Մեք կը փափաքիմք միայն որ, անսալով նոյն իսկ թուրք պատմութեան դասերուն, Սուլթան Համիտ Բ. առնու զփորձ փրկաւտ կողմանըն նոյն ճշմարտութեան, այսինքն, կապէ զՀայաստան սիրոյ զօդովն իւր գահուն, շնորհելով նմա զայն ինքնօրինութիւն որում արժանի է, և այսպէս ապացուցանէ ևս քաղաքակիրթ աշխարհի թէ Սուլթանի վեհապետութեան ներքեւ ալ քրիստոնէայ ցեղի մի հնար է յառաջդիմել և ծաղկիլ:

Տէ՛ր Նախագահ, յայտնի է ուրեմն թէ այս երկրիս մէջ հրատարակուող Հայերէն թերթն հեռի է Սուլթանին իշխանութեան թշնամի լինելէ, որպիսի լինիլ թիւրապէս ներկայացուցած են զայն Ձեր Վսեմութեան:

Թուրքք, սակայն, կը նային խորհրդոց անկեղծագունին անգամ կասկածանօք, ե՛րբ և խօսիմք պատմական օրինաց վերայ, նոքա կը կարծեն թէ մե՛ք կը հընարեմք զայնս, եթէ անախորժ գտնեն զայնս: Բարեկամական ոգւով կ'ասեմք նոցա թէ իրենց կայսրութիւն կրնայ զօրանալ և փրկուիլ միայն իրական բարեկարգութեանց շնորհիւ: Երբ նոքա կը մոռանան թէ պաշտպանութեան պարիսպք չեն կրնար կանգուն մնալ եթէ ուղղահայեացէն չափազանց շեղին, և եթէ յիշեցունեմք թէ ծանրութեան օրէնքն չափի վրիպի կործանելէ այդ պարիսպներ, խեղճ Թրքեր կը կարծեն թէ ծանրութեան օրէնքն մեք կը հնարեմք իրենց դէմ:

Բաց յօրինացն, մասնացոյց արած եմք չօչափելի իրականութիւններ, վայրագ եղելութիւններ՝ նուազ փափուկ զգայարանաց զգալի. — քրդային աւազակախմբեր և Մուսա Պէկի տեսակէն ճիւղակերպ կառավարիչներ, աւերեալ աւաններ և հրկիզեալ հունձքեր, առեւանգեալ կիներ և սրբապղծեալ եկեղեցիներ: Կրնան Թուրքքք ուրանալ զայսոսիկ: Սոքա եղելութիւնն են զոր փատիշահն ալ ընդունած է և մեծ Տէրութիւնք վաւերական գործած են Հայոց արդար պահանջներն Պուլիսեան Դաշնագրի 61դ յօդուածովն, յորում Սուլթանն յանձնառութիւն կ'անէ «անյապաղ գործադրել այն բարեփոխումներն ու բարեկարգութիւններ զորս

տեղական պէտք հայաբնակ գաւառաց կը պահանջեն, և երաշխաւորել Հայոց ապահովութիւնն ընդդէմ Զէրքէցաց և Բըրդաց :»

Վեց մեծ Պետութեանց դեսպանք ի Կ. Պոլիս, աւելի յետոյ, Դրան ուղղեալ Հաւաքական Ծանուցագրով մի բացատրեցին թէ Հայաստանի մէջ բարեկարգութիւններն իրագործելու միակ եղանակն է ինքնօրինութիւն տալ նմա :

Այս առաջարկութեան նպատակն էր ներքին բարեկարգութեամբ զօրացունել զԹրքական կայսրութիւնն, և նախկին թելադրութեանց և փորձերու հետ համաձայն էր : Հայք ստացած էին արդէն, 1861 ին, Ազգային Սահմանադրութիւն մի, վաւերացեալ ի Բ. Դրանէն, իբրեւ նախապատրաստական ընթացք ինքնօրինութեան : Քսան տարիներ անցեր էին յայնժմ հետէ և Հայք մեծցած էին և պէտք ունէին ինքնավարութեան աւելի լայն ըզգեստով զգեստաւորուելու ի ձեռն Սուլթանին՝ իրենց վեհապետին : Եւ այդ իսկ է զոր Բրիտանոնայ Տէրութիւնք խորհուրդ տուին նմա անել, սակայն հաւատացելոց Հրամանատարն հակառակ ընթացքի հետևեցաւ :— Կորզեց Հայոց ձեռքէն նոյն իսկ ստուերն ինքնավարութեան զկոչեցեալն Ազգային Սահմանադրութիւն : Հայք այնքան չցաւեցան այդ ստուերակերպ մենաշնորհէն զրկուելով, բայց Տէրութիւնք տեսաւ յայդմ եղելութեան նոր ապացոյց մի Դրան թիւր ըմբռնմանն՝ նըկատմամբ ուղիղ եղանակին որով արժան է նմա վարուիլ իւր քրիստոնեայ հպատակաց հետ :

Դուռն, սակայն, ահաւորապէս կը վառէ Հայոց զայրոյթն իւր յարաճուն դիմադրութեամբ նոցա կրթական ջանից : 15 տարիէ ի վեր սկսած և կատարելագործած է միջոցներու դրութիւն մի առ ի խափանել Հայոց բարոյական զարգացումն, կ'երևի ա'յն պատճառաւ որ նոցա բարոյական աճման մէջ կը տեսնէ նոցա ինքնօրէն դառնալու բարձրագոյն կոչումն : Այսպէս, հայ դպրոցք կը փակուին, ուսուցիչք կ'աքսորուին, մնացեալ վարժարանաց յայտագիրներէն ինչ ինչ ուսմունք կը ջնջուին, գրքեր, զուտ գիտական հանգամանք ունեցող դասագրեան անգամ, գրաքննութեամբ կ'արգելուին, մամուլն ի Կ. Պոլիս ծայրայեղ հսկողութեան կ'են-

թարկուի և մամուլն ներմուծումն ի Հայաստան բացարձակօրէն կ'արգելուի : Նոյն շարժառիթով Թուրքք կը ջանան ամերիկեան միսիոնարաց կրթական և աւետարանական գործունէութիւնն խոչընդոտենլ— զրկել զՀայս իւրեանց քրիստոնեայ եղբարց բարձրացուցիչ աջակցութենէն : Թուրք քաղաքականութեան այս գլխոյն վերայ Միացեալ Նահանգաց ժողովուրդն ալ բաւական տեղեկութիւն ունի, զի Անաթոլիա դուլէճի նորադէպ հրկիզումն ի ձեռն Թուրք պաշտօնեաներէ ներշնչեալ խռժանին՝ հատորներ կը պարունակէ :

Թրքերն այսպէս կը մերժեն ու է բարեկարգութիւն գործել, և կը ջանան ամենայն հնարիւք անյաջողութեան դատապարտել Հայոց ճգունքն իրենք զիրենք բարւոքելու, և խոստացեալ բարենորոգմանց համար եղող ամեն խնդիր իրեւ նոյնքան ապացոյց կը համարին ապստամբական ոգւոյ, և ապա կամբաստանեն թէ Հայք յապստամբութիւն կը մտաբերեն : Այս եղանակաւ մի քանի երիտարարաց համբերութիւնն սպառեցին ապստամբեցուցիչ վարմամբ և ապա հինգն ի նոցանէ կախեցին քանի մ'ամիս առաջ :

Թուրքք քան զամենայն կատաղի հարուածներն կուտան և յետոյ կը կենան կը զարմանան որ ջերմութիւն յառաջ կուգայ :

Իմ բարի քաղաքակիցն, Պատ. Ֆ. Է. Բլարք,— առ յիշել զմին միայն հազարաւոր ականատես վկայից— Թուրքիոյ ասիական գաւառներն այցելեց այս տարի, և յետ դարձին յօդուած մի գրեց «Բռնապետութեան երկրին» վերայ, յորում կը հաստատէ թէ. «Անվիճելի կերպիւ ճշմարիտ է թէ Թուրքիա է աշխարհի բոլոր երկրաց քան գամենայն յոռեպէս կառավարեալ այն երկիրն որ ինքզինք ազգ կոչելու յաւակնութիւն ունի : Ճշմարիտ է թէ, եթէ երբէք ժողովուրդ մի ապստամբելու և կառավարող դասերն ի միջոյ բառնալու բարոյական իրաւունք ունեցած է, այդ իրաւունք անկ է Թուրքիոյ հպատակ ազգաց : Մեր նախահարց եղած անիրաւութիւնք աննշան գանգատի աննկատելի շափեր կ'առնուն երբ բաղդաառին այն ցաւոց ու վշտոց, այն անիրաւութեանց և խաբէութեանց որք կը գործուին ամէն օր Սուլթանի հպատակաց վերայ :» (ԱՌԻԹ-ԼՈՒԲ, 23 Հոկտ. 1893 :

Թէպէտ ճշմարիտ է թէ Հայք բարոյական իրաւունք ունին ապստամբելու այն ճմլիչ բռնապետութեան դէմ որում ենթարկեալ են, հանդարտ կը կենան, վասն զի նոցա առաջնորդք կը խրատեն զնոսա մուռ անել։ Այդպէս խորհուրդ տուած է նաև «ՀԱՅՔ», ճիշդ այն թերթն զոր Ձեր Վսեմութեան ներկայացուցած են իբր զրդռող զՀայս յապստամբութիւն։ Մեք տակաւին կը սիրեմք յուսալ թէ Քրիստոնեայ Տէրութեանց բարեկամական խնդրատք պիտի բերեն ցոյցուն իլաւագոյն հասկացողութիւն իւր ճշմարիտ շահուց։

Տէ՛ր Նախագահ, այսպիսի լինելով իրաց վիճակն ի Թուրքիա, խոնարհաբար կը թեւադրեմ Ձեր վսեմութեան խրատ տալ Դրան, ի ձեռն մեր դեսպանին ի Կ. Պոլիս, հետեւիլ աւելի բարւոք և ազատական քաղաքականութեան մի վերաբերութեամբ իւր քրիստոնեայ հպատակաց։ Կարծեմ այս պատշաճ է ոչ վասն զի մեր կառավարութիւն մասնակից է Պէտլինեան Դաշնագրոյն, այլ ճիշդ վասն զի չէ մասնակից։ Մեր երկիրն բնաւ չա՛հ չունենալով յԱրևելս, և ոչ բաղձանք Թուրքիոյ ո և է մասն իւրացունելու որպէս ոմանք յեւրոպեան Տէրութեանց յաջա թրքաց կը կասկածուին ունենալ, Դուռն մէտ չէ ամերիկեան խրատն այն անվստահութեամբ լսել որով գերոպականն։ Երկրորդ պատճառն որով մեր երկիրն պարտի փորձել բերելու զԴուռն իլաւագոյն վարս հանդէպ իւր հայ հպատակաց, է այն իրողութիւնն զի Միացեալ Նահանգք առաւել քան զայլ ո և է երկիր ծառայութիւն մատուցած է Հայ ազգին իմացական և բարոյական լուսաւորութեանն ի Թուրքիա։ Ամերիկեան առաքելութիւնք ի Տաճկաստան 60 տարիէ հետէ գործած են մասնաւորապէս Հայոց մէջ, երկրին բոլոր ցեղերուն մէջէն Հայն լինելով քան զամենայն ընկալուչն նոր գաղափարաց և եւրոպական քաղաքակրթութեան։ Հազարաւոր Հայ երիտասարդք դաստիարակեալ են ի Բոսլէթ գոլէթ (Կ. Պոլիս), ի Կեդրոնական Թուրքիոյ գոլէթ (յԱյնթապ), յԵփրատ գոլէթ (Պարբերդ), յԱնթուրիա գոլէթ (Մարդուան), և յայլս։ Հայք ոչ փոքր չափով իւրացուցած են տարեբն ամերիկեան քաղաքակրթութեան։ Ողբա շատ աւելի երկար ժամանակ չեն կրնար խոնարհաբար հանդուրժել բռնապետութեան։ Նոքա

դեռ առժամանակ մի պիտի զսպեն իրենք գիրենք, ոակայն եթէ քրիստոնեայ Տէրութիւնք չփութան ամոքում բերել նոցա, զգացմունք և կիրք որդարասիրութեան անզսպելի կերպիւ դուրս պիտի ժայթքեն բուռն արտայայտութեամբ։

Ի կարի Թուրք կառավարութեան է խափանելայդ ժայթքումն, ո՛չ ճնշողական միջոցներով որք միայն գրգռելու կը ծառայեն, այլ գոհացում տալով Հայոց արդար պահանջներուն որպէս բանաձեւած են ոտորագրող Տէրութիւնք ի Հաւաքական Մանուցագրի իւրեանց ներկայացուցաց։

Ներեցէ՛ք, Տէր Նախագահ, որ, իբրև վերջաւորում, նշանակեմ և զայն թէ Թուրքիոյ վերջին չփութութեանց ատեն և ի համարի գրգռեալ Հայ երիտասարդաց չկար և ոչ մէկ ամերիկացի Հայ։ Իրողութիւնն այն է թէ այս երկրի մէջ քաղաքացութիւն ստացող Հայոց մէկ աննշան առ հարիւրն կը վերադառնայ ի Տաճկաստան, և անոնք որ կը վերադառնան, խաղաղիկ և օրինաւոր գործերով կը զբաղին, ընդհանրապէս ի վաճառականութեան և յաւետարանական աշխատութեան։ Ի տես այս եղելութեանց, շատ զարմանալի է որ Բ. Դուռն կարենայ մտադրել «արտաքսել իւր հողէն Հայերն որք քաղաքացութիւն ստացած են Միացեալ Նահանգաց մէջ 1868էն ի վեր»։ Դուռն կատարեալ իրաւունք ունի արտաքսելայն Հայեր որք գուցէ ապստամբութեան միջամուխ լինին, թէպէտ պատճառ ունիմք հաւատալու թէ այդ պատահականութիւն կարի անհաւանական է։ Սակայն երբ Բ. Դուռն կը յայտարարէ թէ միտք ունի արտաքսել այն Հայերն որք օրինաւոր հետամտութեամբք կը պարապին, կ'արտայայտէ դիտաւորութիւն մի կոչտապէս վիրաւորիչ և անքաղաքավար հանդէպ Միացեալ Նահանգաց։ Լաւ կը լինի Թուրք կառավարութեան եթէ յստակօրէն իմաց տրուի նմա թէ մեք միայն մէկ տեսակ քաղաքացի ունիմք, ո՛ւստ և իցէ նոցա ծագումն, և թէ ամենեքին կոչումն ունին միևնոյն իրաւանց, և աշխարհի ո և է մասին մէջ օրինաւոր գործով զբաղելու։

Տէ՛ր Նախագահ, բազում չքմեղանօք այն մեծ ազատութեան համար որով բացատրութեան սոյն նամակն կ'ուղղեմ Ձեզ, պատիւ ունիմ մնալ

Ձերդ Վսեմութեան
Յոյժ խոնարհ և յոյժ հնազանդ ծառայն
Մ. Ս. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ, ՏՈՒՔԹ.,
Խմբագիր-հրատարակիչ «ՀԱՅՔ»-ի
202 Ունիթ 23դ Փողոյց
Առ Նորին Վսեմութիւն
ՏԵՐ ԿՐՈՎԸՐ ՔԼԻՎԸԼԷՆՏ
ՆԱԽԱԳԱՀ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

ՉԵՐՍԵՆՆԻՆԻ

(Շար. տես թիւ 22դ)

Գ

Իսմայիլ Պէկի միակ դուստրն, կին
Իսհաք Պէկի, ծնաւ երեք որդիք, Իսմա-
յիլ, Ասլան և Շէրիֆ: Սոքա, ի մահուան
իրենց մօր, ժառանգեցին իրենց հաւուն
Իսմայիլ Պէկի հողերն, և շոյլորէն և ա-
նդգամօրէն կ'ապրին:

Շատ երկար կը լինէր նկարագրելայն
հարստահարութիւններն, այն քմահաճու-
թիւններն որոց ենթակայ են Չարստնճա-
գի Հայք ի ձեռն այդ պէկերու: Մի քանի
նշանաւոր և հետաքրքրական օրինակնե-
րով պէտք է շատանամք:

ԹԱՆԾԱՅ քահանայն օր մի յերթալն
ի Նոր գիւղ, հանապարհին մերձ ի հաս-
կէտն, կը հանդիպի պէկերուն և սպասա-
ւորացն, որք ի գիւղ վերադարձող հայ հո-
ղագործներուն, նախաստական պրօստի-
րութեամբ, ձմերուկի կեղեւներ կը նե-
տէին, զարնելով ասոր գլխուն անոր կո-
նակին: Քահանային ևս նետեցին, և սա,
ընդ կատակ, ետ նետեց դէպ ի պէկերու
սպասաւորներն զկեղեւն: Երիցուն այս հա-
մարձակութիւն եղեռնական գործի տպա-
ւորութիւն գործեց Ասլան Պէկի վերայ,
որ վիրաւորեալ վագրի նման յարձակե-
ցաւ անմեղ երիցուն վերայ, հալածեց
զնա մինչև ի դիւղն, և հասնելով նմա աչն
սենեկին մէջ ուր ապաստանած էր հէքն,
սկսաւ ծեծել, հայհոյել, աքացել, կոխո-
տել դազանային կատաղութեամբ: Հայք
և թուրք չուրջ ժողովեալ էին և կային
անմռունջ ի զնին, ոչ ոք կը համարձակէր
ի մէջ մտիլ, հերիք է՝ ասել, թէ և զոհն
անձայն և անշարժ իբրեւ մեռեալ ինկած

էր: Փետել տուաւ մօրուքն և աղբ քսել
տուաւ, և ծոցին Աւետարանն ու Սաղմո-
սըն այրեց: Վերջապէս Պէկին թուրք ծե-
րունի ծառայն հասնելով համարձակեցաւ
աղաչել և ի բաց տանիլ զիւր վարազա-
ցեալ տէր:

Այս դէպքին լուրն ի Խարբերդ հաս-
նելուն՝ Հայք, միտնաւարք և եւրոպական
հիւպատոսք շաւ յուզուեցան: Քահանայն
աղերսագիր մատուցանելով բողոքեց: Պոլ-
սոյ Պատրիարքարանն ալ թագրի մատոյց
Ք. Դրան և հրաման եղաւ որ խնդիրն քն-
նեն և ոճրագործ պէկն յղեն ի մայրաքա-
ղաք: Չարստնճագի պէկերն ալ, մանա-
ւանդ Իսհաք Պէկ, շատ բազմածախ ջան-
քեր արին խնդրոյն վերջ տալու, և ար-
դարեւ յաջողեցան զերէցն համոզել Բա-
շաղալի գիւղապետ Գարոյին միջոցաւ եր-
կիւղ ներշնչելով՝ որ երթայ եղելութիւնն
ուրանայնոցատի դատարանին առջև: Երբ
երէցն յանձն առաւ այս խայտառակու-
թիւն, թուրք կառավարչն երեք անգամ
հարցաւ քահանային. «Յիսուսի լուսէն
դուրկ մնա՞ս եթէ ճշմարտութիւնն կ'ու-
րանաս» և երէցն երիցս պատասխանեց
«այո»։ Յայնժամ դատաւորն թքաւ յերես
երիցուն և նորա ուրացման ստորագրու-
թիւնն յղեց ի Խարբերդ, որ ապա Պատ-
րիարքարանն ալ ներկայացուեցաւ և այս-
պէս ամեն յոգնութիւնք և նեղութիւնք
յանգեցան յամօթալի վիժումն դատաս-
տանին:

Սակայն այրուած Աւետարանին վրէ-
ժն էր որ կը հաւատամք թէ առնուեցաւ
երբ այդ գազանաբնոյթ և գազանանուն
Ասլան պէկի 14 տարեկան որդին, ներկա-
յէս իբր երկու տարի առաջ, օր մի իւր
մօրմէն ծածուկ հաց ուտելու պահուն՝
ղգեստն կրակ առնելով կրակարանէն, այ-
րեցաւ այնպէս չարաչար որ երեք օր յե-
տոյ մեռաւ:

Ասոր նման և աւելի հրաշալի բան
մ'ալ Իսհաք պէկի կնոջ պատահած է: Սա
օր մի, զբօսալի շրճագայութեան մի պա-
հուն, Բաշաղալի Հայկական մեծ եկեղե-
ցին բանալ տալով կը շրջի, կը զննէ գը-
քերն խաչերն և այլ զարդեր յայտնի ար-
համարահանօք: Ոսկեհամուկ պաստառի մէջ
ամփոփեալ հին մագաղաթի վերայ գըր-
ուած Աւետարանն ալ հետաքրքրութեամբ
կը զննէ, և երբ խաչեալ Յիսուսի պատ-
կերն կը տեսնէ ի ճակատու Ս. Աւետա-

րանին, նախատական խօսք մի կ'արտաբերէ: Եկեղեցիէն մէկնելէն հազիւ 15—20 վայրկեան յետոյ, ամբարիշտ կինը կը ըսէ՝ կսի գանգատիլ թէ աչքերն կը ցաւին. երեք օր կ'օրորեն զինքն. վերջապէս երբ կարող եր լինի քնանալ, յերազի հրաման կ'ընդունի զոչ մատուցանել: Իսկոյն կը կը հրամայէ որ պարարտ կով մի, ոչխար մի և գառն մի զենուն առաջի դրան եկեղեցւոյն և բոլոր շրջակայ գիւղերու բնակիչներն հրաւիրեն գալ վայելել միսն ու մաղթանք անել: Այդպէս եղաւ ալ. բայց կնոջ աչքերն կուրացան բոլորովին. այնպէս որ իւր վերջին գաւակաց երեսն քնաւ չկրցաւ տեսնել:

Հրաշագան պատժոյ հարուած վատ Հայերու ալ հասած է: Իսմայիլ պէկ Բաշաղակցի Սարգիսի հարսն բռնարարած լինելով դատ բացուեցաւ: Սարգսի եղբայրն Պապլ վատաբար գործի եղաւ Իսմայիլի և Իսհաքի և սուտ վկայութիւն տուաւ թէ ինքն այն օր կը գտնուէր իւր եղբոր տունն, թէ այնպիսի բռնաբարութիւն տեղի չէր ունեցած, Այլ թէ Օսման պէկի թշնամական թեւադրութեան անսալով իւր Սարգիս եղբայր զրպարտած էր զԻսմայիլ Պէկ: Սակայն դատն այսպէս կորուսանել առող այս ստերդումն անպիտան, օր մի ի ճանապարհին շանթէ զարնուելով յանկարծամահ եղաւ:

Յիշենք սակայն թէ Սարգիս ինքն ալ որ իւր հարսին անպառուութիւնն տեսնելու կսկիծն ունեցաւ, այդպիսի կսկիծի արժանացած էր իւր վատութեամբ մեծ դատի մի մէջ: Դատն էր Չարսանճագի Հայոց հողերու այն կարեւոր դատն որ տարիներ տեւեց: Շնորհիւ կորովի ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՎԸՐՈՒԶԵԱՆԻ որ Բերի նստաւ երկար տարիներ և քաջ հովիւ եղաւ Չարսանճագի Հայոց, Հայեր դատ բացին և իրենց տներ, ջրեր, ճամբաներ, պարտէզներ, այգիներ արտեր պահանջեցին պէկերէն: Այս դատի միջոցին էր որ Սարգիս գնաց յերիզա և ստախօսութեամբ վկայել ուզեց թէ Հայերն հող չունին, այլ միայն ս. առաջնորդէն գրգռեալ ելեր են անիրաւ պահանջ անել Պէկերէն:

Այդ դատավարութեան եզակի միջադէպերէն մին ալ Սարճոնց Արութի անուան կապուած է: Սա իւր երեք ջրաղացներու գոչաններն ի ձեռն գիմեց կա-

ռավարութեան, և երբ վերջապէս արդարութիւնն զլացան իրեն, միանգամ զայրանալով՝ հայհոյեց մահմետական օրէնքին դէմ: Այս զայրութի շնորհիւ խեղճն ոչ միայն կորոյս ջրաղացներն այլ և իւր կեանք ի վտանգ դրաւ: Թրքերն կ'ուզէին վրէժ լուծել իրմէ: Արութ պրծուելու համար պատուհասէն, խենթ ձեւացաւ և բանտին մէջ ամեն այցելողի կը հայհոյէր և անյար ու ցնդած խօսքեր կ'ասէր: Այս կամաւոր վարժութիւնն ողբալի սրբաւորութիւն գործեց թշուառին մտաց վերայ, որ իրօք խենթեցաւ ու մեռաւ:

Անենք այժմ երկու խօսք ալ ուղղակի այս հողի դատի մասին: Զգիտեմք թէ որքան ժամանակէ ի վեր պէկերն Հայոց ձեռքէն յափշտակեր են հողերն, բայց հաւանական է որ դարուս սկիզբներն այդ պատահած լինի, եէնիչէրիներու բարձման տեսներն, կամ թէ ԺԸ դարու մէջ, քանդի Հայերու քով ցարդ պահուած կը մնան հողի հին գոչաններու շատերն:

Հայր Նէվրուզեան խնդիրն ձեռք առաւ քաջութեամբ, և Պատրիարքարանի ջանից շնորհիւ Հայերն վերջապէս իրենց հողերուն նորէն տիրանալու յուսով վառուած էին, երբ 1877ի ռուսընդթուրք պատերազմն ծագեցաւ և խնդիրն մոռացութեան տրուեցաւ: Պատերազմի վախճանէն յետոյ խնդիրն նորէն ձեռք առնուեցաւ և նոր գոչաններն Պոլսէն յըղուեցան ի Բերի: Բերիցիներէն շատեր յայնժամ գնացին առին գոչաններն ի տէր դարձան իրենց յափշտակեալ ստացուածոց: Իբրեւ միջանկեալ աստ յիշեմք թէ Բերի բաւական մեծ աւան է, իբր 1,000 տուն բնակչօք, մեծ մասամբ հայ, հետեւապէս աւելի սրտոտ: Շրջակայ գիւղերէն ալ ոմանք համարձակեցան գալ իրենց գոչաններն առնուլ և կամաց կամաց ձեռք բերել իրենց հարց սեպհականութիւններն: Բայց Հայոց յոյժ մեծ մասն չի համարձակիր ոչ գոչանն երթալ առնուլ և ոչ սեպհականութիւնն պահանջել. զի՞ վաճն զի կը վախնան պէկերէն: Եւ ապաքէն վախնալու ալ պատճառ ունին: Պատմեմ ձեզ թէ ինչ պատահեցաւ այն մի քանի խեղճ գիւղացւոց որք գոչաններն հանելու ծախուց պատրաստուելու համար հարկաւոր դրամն հայթայթեցին կտաւ վաճառելով ի Զմշկածակ, և ի դարձին իւրեանց հանդիպեցան Օսման Պէկի մար-

դոց, որք յատկապէս յղուած էին կողոպտելու համար զիրենք այն դրամէն որ պիտի ծառայէր գոչաններն ձեռք բերելու:

Արդարեւ անօրէնք բոլորովին կողոպտեցին Հայերն, սպաննեցին մին կամ երկուքն, և այսպէս սարսափ սփռեցին սրիշ գիւղերու վերայ:

Արդէն իբր չորս տարիէ որ Հայր Նէվ-րուզեան վախճաներ է և յայնմ հետէ Ջարսանճագի Հայք աւելի տկարացած և թշուառացած են:

Օրհնեալ Լիցի յիշատակն արգարոյն
Տէ՛ր Յովհաննէ՛Ս Ծ. Վ. ՆէվՐՈՒԶԵԱՆԻ
Խարբերդ, 1 Հոկտ. 1893 ԱՐԲՈՒՆ

ՆԵՄՆԿ Կ. ՊՈԼՍԷ

Կ. Պոլիս, 4 Նոյ. 1893

Նալովայի ջերմուկները չկրցան կազդուրել Աշըգեան Պատրիարքը, որ տակաւին կը շարունակէ իւր հիւանդոտ ընթացք:

Այս կիրակի օր Մամիկոնեան Աբրահամ եպ. քարոզ կը խօսի Գում-Գարուի դրսի Ս. Յարութիւն եկեղեցւոյն մէջ. չէ կարելի բացատրել ի՞նչ տեսակ հոսանքի մէջ բռնուելով Սուլթանի կենաց համար երկայնաշար մաղթանքներէ ետք սապէս կը շարունակէ. «Եթէ կարելի լինէր մեզ ունենալ ժրջան և բանիբուն պատրիարք մի, մեր թշուառ, բանտարկեալ եղբարց արտասուքը պիտի կրնար սրբել, զի Սուլթանի ոտք իյնալով շնորհ պիտի խնդրէր անոնց համար, բայց ափսոս որ հաց կայ բերան չկայ:» Բնական էր հետեցնել որ այս ակնարկութիւններ անմարտելի պիտի լինէին Աշըգեան պատրիարքին, Երկուշաբթի առաւօտ Աբրահամ եպիսկոպոս Պատրիարքարանի դահլիճն է, Աշըգեանի առաջ, որոյ աջակողմը բազմած է Մաքսուտ Սիմոն Պէյ: Աշըգեան բացատրութիւն կը պահանջէ, Մամիկոնեան չի պատասխաներ, վճիռ մի կը լինի, ըստ որում Մամիկոնեան պէտք է առաջնորդուի Աղգային հիւանդանոց բանտարկուելու համար: Բարապաններէն մին կ'ընկերանայ Աբրահամ եպիսկոպոսին մինչ Գում-Գարուի կայարան. սակայն այս առաջինն փոխանակ եւտի-Գուլէի կառախումբը առ-

նելու Սիրքէճիներն կը բազմի, և կէս ժամ ետք ոստիկանական նախարար Նազըմ Պէյի առաջն կը լինի: Աշըգեանի տնօրինութիւնն կ'իմացնէ, պատճառն ալ բացատրելով: Նազըմ Պէյ կը ցաւի Աշըգեանի վերայ և կ'ապահովցնէ իւր նախկին դատատուն որ ապահով լինի. (Մի ժամանակ Մամիկոնեան եպ. Կիպրոս կղզին առաջնորդ եղած է, այն ժամանակ երբ Նազըմ Պէյ իւր հօր հետ աքսոր կը գտնուէր անդ, Նազըմ Պէյ Աբրահամ եպիսկոպոսէն Հայերէն դաս առած է և առայդ մեծ յարգ կը վայելէ Սուլթանին ոստիկանական նախարարին մօտ):

Աշըգեան Մամիկոնեան եպ. ի այս խաղէն սարսափահար՝ կրկին իւր մօտ կոչելով զայն խրատելէ ետք Կէտիք-Փաշայի եկեղեցւոյն քարոզիչ կը կարգէ զայն: Միւս կողմէ կաշխատի Սիս խրկել զայն: Նախորդ նամակաւ գրած եմ Կեսարիայի մէջ երևան եկած նոր յուզման մասին, Սուլթանի պալատէն տրուած հեռագիրներ ի վերջոյ հրահանգ տուին տեղական կառավարութեան ի Պոլիս խրկել խռովարարները: Երկու օր առաջ մուծի հետ էնկիւրիի շոգեկառքով Պոլիս բերուեցան ատոնք: Լեւոն Կիւզէլեան, Գրիգոր Թոքատլեան, Ռուբէն Սարաֆ Օղլու, Արմենակ Պոյաճեան և Տէր Սարգիս քահանայ, չղթայակապ: Կայսերական պալատան մէջ տեղի կ'ունենան դատավարութիւնք և արդէն պաշտօնական չղթանակի մէջ պտտած զրոյցի մի համեմատ քիչ օրէն պիտի աքսորուին Աքեա:

Խռովարարք երբ Հայտար-Փաշայի ծովափը իջան, խռնուած թուրք ամբոխը, զիտելու համար չղթայակապ սրտոտ Հայ յեղափոխականները որ զուարթ էին և անխոյթ, մոլեգնած բազմութիւնը կատրած կը հայհոյէր, առանց զգալու թէ Հայերու պահանջը իրաւունք մ'է, ոչ այլ ինչ:

Հոգեւոյն Նար-Պէյ Սրբազան իւր կարգադուրկ վիճակին մէջ «Մեծագործութիւնք վեհ. Սուլթան Համիտ Բ. ի» տիտղոսով մի հատոր ջանաց փորձել, այդու թերեւս կարենալ մեղմելու համար Սուլթանին կատաղութիւնը, սակայն զայն ներկայացունելէ առաջ վախճանեցաւ: Վերջին օրերս իւր քեռորդին Տիրան Պէյ կը ներկայէ զայն Սուլթանին և Ապտ-իւլ-Համիտ 200 ոսկւոյ դրամական նուէրի

հետ, Արտաքին դործոց նախարարութեան մէջ ալ պաշտօն կը յատկացնէ նմա: Վերոյիշեալ հատորը Բարիդ տպագրութեան յանձնուած է և քիչ օրէն լոյս կը տեսնէ:

Թիւթիւնճիէֆին ալ վերջին օրերս արտաքին գործոց նախարարութեան օտար մամլոյ դիւանին մէջ պաշտօնեայ կարգուած է, իբրեւ Պոլկարական, Ռուսական և Ռուս լեզուաց գրաքննիչ:

Անցեալ օր Նախնիքեան անուն մի վատ կեռարացի, մի քանի հարուստ վաճառականներու կը ներկայանայ և կը սպառնայ յեղափոխական գործերու մասնակից ցոյց տալ եթէ չուզէին դրամական հատուցում ընել իրեն. և այսպէս կը յաջողի 160 ոսկւոյ չափ գումար մի ձեռք ձգել, ոստիկանութիւնը կը յաջողի ձերբակալել Նախնիքեանն, որ նախնական քննութեանց վերջանալէն ետք կը յանձնուի եռեռնադատ ատեանին:

Կ. Շ.

ԹԱԼԵՆԸ ԳԵՂ

Ծուխը ամպի պէս կելլէր դէպի վեր, Տընտըղի նըման բոցը կը բալէր. Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի Անսիրտ անհոգի մատնած են կրակի:

Հայերն հօտի պէս սարսած կը վազեն, Անցնող-դարձողէն օգնութիւն կուզեն. Օգնութիւն: Խեղճեր: Կատողած Օսմանլին Չար մահ կը սպառնայ զարհուրած Հային:

Մայրը կականով կը փնտռէ աղջիկ, Աղջկան գերի ոտքաւ չար Տաճիկ, Իր որդուն կուզէ Հայրը չըւարած— Որդուն կը տեսնէ խաղուխի դըրած:

Հայի հաւաքած մալը աղքատին Հէլալ փայ եղաւ անկշտում Գիւրգին, Խեղճը յուսահատ կաշէ երկընքին, կը սպասէ նպաստ հրեշտակաց զօրքին:

Խաբուսիկ յոյսեր. Դեռ շատ ու շատ դար Պիտի խաբուխ, Հայ, ինչպէս խաբուեցար: Թէ ինքըն չանես քու գլխու ճարը, ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը...

Խեղճ մարդ, մի անգամ մեռնելէ վախճար, Մինչ մահուան օրըն Հազար մահ տեսար, Հազար մեռնելըն Հազար ցաւերով, Զաւակիդ փոսը ձեռքովդ փորելով...

Դու միշտ եղբօրդ անտէրունչ թողիր, Մատիդ ծայրովը նորան չօգնեցիր. Գլուխն առաւ խեղճը, զընաց հեռացաւ... Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ:

Դուն կարծեցիր թէ՛ ոսկին մեծ բան է, Ամէն մի ցաւի, դարդի դարման է. Ապա հէ՞ր ոսկիդ քեզի չի օգնեց, Կընկադ, զաւակիդ մահէ չփրկեց...

Ա՛խ, Հայեր, Հայեր. թէ որ ձեր ոսկին Կիսով չափ գոհուէր յօգուտ Հայ ազգին, Աւմիշտ կը դադարէր ձեր լաց ու կական Ու դրախտ երկրաւոր կըլլար Հայաստան: ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՅԵՐՆ ԵՒ Բ. ԴՈՒՌՆ

Թրիֆիթն թերթին մէջ ամստորագիր մամակ մի հրատարակուած է, որմէ կ'առնուիմք հետեւեալ կարեւոր կտորներն:

Անշուշտ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն չուզեր որ ունէ թրքական հպատակ Ամերիկացի լինի ա՛յն սիրով որ ի Թուրքիա վերադառնայ և խոշոր դըլխարկով պերճանայ: Սակայն, միւս կողմանէ, անպատճառ կը զգայ թէ խնդիրն ծանր է այնպիսի դէպքերու մէջ յորս երիտասարդ մի, Ամերիկայի մէջ գործ հաստատած և բնակաւոր եղած լինելով՝ Թուրքիայէն իւր նշանածն առնուլ համար կը ճամբորդէ, և իւր սիրոյ թեւերուն ջախջախումն կը զգայ Թրքային բանտի մէջ: Նա չի կրնար դիւրաւ մարսել երբ Թուրք պաշտօնեայք նախատեսք թքեն իւր անցագրի վերայ, որպէս կ'անեն նոքա այդպիսի դիպաց մէջ: Թուրքք, սակայն, իրենց կողմն զօրացունելու մտօք, այժմ սկսած են առել թէ այս ամերիկացի դարձած հպատակաց մեծ մասն հայազգի են, և եթէ հայազգի են, ի հարկէ ապստամբութիւն նիւթելու համար կը վերադառնան ի Թուրքիա: Սակայն չեն կրցած Թուրքք ի մէջ բերել ցարդ օրինակ մի յորում աւելի քան թրքական կասկած գտնուէր: Բայց փաստն կշիռ կ'ունենայ առաջի Միացեալ Նահանգաց կառավարութեան, և կ'երեւի քէ Թրքաց կասկածն հայազգի ամերիկացւոց դէմ ընդունելի պիտի լինի Միացեալ Նահանգաց իբրեւ պատճառ այնպիսեաց արտաքսմանն, լինին նշանուած կամ ոչ:

Թուրքք լայն տեսութեան անընդուն-

նակ են, և զայս կը ցուցնեն օտարաց հետ վարուելու ինչպէս և իրենց հայ հպատակաց հետ վարուելու մէջ: Թուրքիա երկու մեծ սխալ կը գործէ՝ Հայոց հետ վարուելու մէջ: Նախ, թուրք պաշտօնեայք կը պնդեն թէ կառավարական պաշտօնէի տարակարծիք լինիլ՝ կառավարութեան անհաւատարիմ լինիլ է: Վարչութեան կարծեաց հակառակ ու է հաւատարմական քաղաքական կարծիք չի կրնար լինիլ: Երկրորդ, իրենց գործողութեան ընդհանուր խարխիւն է այն հայեցողութիւն թէ ամեն Հայ պէտք է այս անհաւատարմութեան յանցանքով յանցաւոր լինի ըստ որում հայ ծնած է: Եթէ չի կրնար ոք հաստատել թէ ինքն անհաւատարիմ չէ, պատժոյ արժանի է իբրեւ ապստամբ: Այսպէս, թուրք բանտեր լի են Հայերով որք իսկզբան հաւատարիմ կամ անհաւատարիմ կրնան եղած լինիլ, բայց որք անշուշտ կատարի անհաւատարիմներ պիտի լինին եթէ ներկայ քաղաքականութիւնն երկար շարունակէ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կ. Պոլսէն Դեկտ 14ին կը հեռագրեն թերթից զհետեւեալն. —

Սոֆի ի Կարին և ի շրջակայս, Հայաստանի մէջ, ծանր երևոյթ կ'առնու: Հացին գինն սովորականին տասնեակու պատիկն է: Շահադէտներու ձեռքին մէջ է ցորենը, որք մեծ մահամբ թուրք պաշտօնեայք են:

Անգլիական Խորհրդարանին Նոյ. 24ի նստին մէջ Տէր Ֆրանսիս Սթիվընսն հարցաւ թէ արդեօք Թագուհւոյն կառավարութիւնն կրնա՞ր տեղեկացունել թէ ի՞նչ եղած է Հայ բանտարկելոց և աքսորելոց ի նպաստ եղած ներկայացմանց արդիւնքըն: Սըր Է. Կրէյ պատասխանեց թէ Մայիսին դատապարտելոց պատիժներուն մեղմացումն ձեռք բերուած էր արդէն Յուլիսին: Ուրիշ դէպքեր ևս Մեծ Վէզիրին ուշադրութեան բերուեցան յետոյ, որ խոստացաւ խնամով քննել: Ասոնցմէ ումանք ալ արձակուած են, բայց, ինչպէս Օգոստոսին ասացի, Թագուհւոյն կառավարութիւնն չի կրնար միջամտել ի նըպաստ այն բանտարկելոց որոնց անմեղութեան համար զօրաւոր ապացոյց չունի:

Այսօր, դեկտ. 15, Բարիզէն ոտացանք նկարագրութիւնն ուխտազնացութեան հանդիսին զոր մեր բարիցաբնակ հայրենակիցք կատարած են Նոյ. 26ին ի Սէն-Տընի, յայց Լեւոն Զ. ի շիրմին, առթիւ նորա մահուան հինգհարիւրերորդ տարեդարձին: Այս առթիւ խօսուած ճառերուն հրատարակումն յաջորդ թուով:

«ՀԱՅԻ» 21դ թուոյ մէջ նկարագրուած ժողովն վիպային էր, որպէս եկեղեցական Վեհ. Ծերունւոյն հրաշալի երեւումն ու աներեւոյթ լինիլն և նորա բանից ընծայուած երկնաշունչ ազդեցութիւնն կը ցուցնեն:

Պոթոնի կողմէն թղթակից մի կը գրէ Դեկտ. 9ին — «Հայք» ի 22դ թիւն կարգացինք: Իրօք յոյժ գոհացուցիչ գտանք պատասխաններն և շատ ուրախացանք: Դուք վարձատրուած էք, վասն զի հաւաքակորդք ձեր քիչ չափ լուսաւորուած են, ինչպէս կը տեսնենք նոցա այժմու մեղմութենէն:

Թղթակից մի կը փափաքի որ իւր հետեւեալ հարցին պատասխանեմք. —

«Ի՞նչ Զնչակեան առաջնորդ եղբայրները Հայոց Պատմութեան վրաց երբէք բան չեն գրեր իրենց թերթին մէջ, և երբ բոլոր աշխարհ թունտ ելաւ Խրիմեան Հայրիկի համար և օտար լրագիրներ ալ անոր վրայովը գրեցին, Զնչակեանք ամենեւին այդ մասին բնաւ տող մը իսկ չգրեցին: Արդեօք ո՞ր ազգի ազատութեան համար կ'աշխատին այս պարոն Զնչակեանները, արդեօք մեր գիտցածէն տարբեր հայ ազգ մը գտած են: Ասոր վրայ ձեր թերթին մէջ բացատրութիւն տուէք և մեզ շնորհակալ ըրէք, որով մնամ ևն:»

Մեր թղթակցի հարցմանն պատասխանել չիք մեզ: Հարցումներ կան որք իրենց պատասխան ունին իրենց մէջ:

Մեծայարգ խմբագիր,

Թուրք կառավարութեան ճնշումը վերջին աստիճանին հասած է: 1888 թուականին Հիւսէյնիկու պանտուխտ երիտասարդութիւնն եկեղեցւոյ սիրովն լեցուած ըլլալով՝ բաւական թանկ գանգակ մը գնեց և Հիւսէյնիկ ուղարկեց իբրեւ կոչնակ գործածելու համար: Հոն ալ ծախքով գանգակն կախեցին և սակայն հազիւ

մէկ քանի օր հնչուած էր երբ մոլեռանդ թուրքերն զչարեւիվ դէմ ելան: Իբր թէ զանգակին ահագին հնչունէն վախնալով՝ թուրք կին մի վիժած լինէր արգանդի պտուղն . . . :

Նմանապէս Մէզրէի բողոքական եկեղեցւոյն զանգակն լռեցուցին թուրքերն, և աւելի քան տասն տարիներէ ի վեր այդ մետաղեայ սոխակն ալ բանտարկուած կը մնայ շնորհիւ մոլեռանդ մահմետականաց:

Խ. Ե. Ա.

(Ուսթըր)

Մեր Արգոյ բաժանորդք անյապաղ մեզ հասցունելով 1894 թուականին համար իրենց բաժնեգին, մեծապէս շնորհակալ կը կացուցանեն զմեզ: Ինչպէս անցեալ տարի ալ ծանուցած եմք, սա վճարահաշիւներն կամ անվտանգութեան խընդիր չէ, այլ կանոնաւորութեան: Չվճարողաց «Հայք» չյղելով մեք բնաւ յանվտանգութենէ չեմք շարժիր, այլ կը բաղձամք կանոնաւորութեան վարժութիւնն, իբրեւ պատուական և քաղաքավար սովորութիւն, ընդհանրացեալ տեսնել:

Հ. Ե. Ք. Բ.

Հայ երիտասարդաց Գրիտոնէական Ընկերակցութիւնն Շաբաթ Դեկտ. 30 երեկոյեան ժամը ճիշդ 8ին Տարեգլուխն պիտի տօնէ մի պարզ հայկական կաղանդի հանդիսիւ:

Պիտի ըլլան ճառեր, ազգային երգեր, կաաակախօսութիւնք, ջութակ, նաև պըտուղ, պաղպաղակ, ևայլն:

Մուտքը ձրի է:

Հանդիսի Մասնախումբ

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ե Ք Ո Ր Մ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St.

Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

Լ.Օ.Գ.ԵՅՅԻՆ ՓՈԽԵԴԵՐՁ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէս, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդը կ'ընդունին հազար թալէս, եթէ պայմանն հազար թալէսի է, կամ մինչև հինգ հազար թալէս, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդարար վաղն մեռնի, պայմանագրեալ հազար կամ աւելի թալէսն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

C. F. RANDALL

177 Front ST.

Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ Հայ Հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և բըպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ Հայ Հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻՈՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանքով և Զերդ Բանտօլ

ՅՈՎԱՆՆԵՍ

Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանելու թէ

1554 B, way

46 և 47 փողոցներուն միջև

Constantinople Bazaarի, (ԲՈՆՍԹԱՆԹԻՆՈՓՈԼ ՊԱՋԱՐ) մէջ ունի թրքական մեծաքանակ գորգեր (խալիներ) և թրքական ուրիշ ապրանք, զորս կ'ուզէ բոլորովին ծախել լինցունել յայտ ԴԻԻՐԱԳՆԻ, ՀՈՒՍԷՅԼՈՎ (wholesale): Արդ, վաճառականներ որոնք այս գործով կը զբաղին, կրնան այս պատեհութենէն օգուտ քաղել, աժանագին հոլաքլ ապրանք գնելու: Նաև այն հայրենակիցներ որոնք կը փափաքին ծըննդեան և նոր տարւոյ առթիւ ընծայ տալ իրենց բարեկամաց, կրնան մեր պազարէն գնել իրենց ուզածն, թէ՛ ԸՆՏԻՐ և թէ՛ ԱԺԱՆ:

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ՆԴՐԱՆԻՅ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուններու շահերն միեւնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերըն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըստակ զրկել գէպի Եւրոպա կամ Կ. Պոլսոյ, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Չիմիկէզէզ, Չունքուշ, ընդհանուր չըջականերով, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի դանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու:

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Դին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուոչեսթըր,
385 Main St. Worcester, Mass.

THE WORCESTER MECHANICAL
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷԲԵՆԻԲՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆԿ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս գնել վերոյիշեալ պոնթային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր կէսէն հաշուելով:

Ո՛ր Հայեր,

որ կը բնակիք Ուոչեսթըրի մէջ, ձեր տներն յարմար են իմ գիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կողման իմ գներս: Իմ անունն Հաշան է, և խանութս կը գտնուի Պրոնթ Սթրիթի 60 նիւմէրոն: Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ: Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ տաքն նստըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK
27րդ և 28րդ փողոցաց միջև

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ Էվինիու նիւ Եորք
26րդ և 27րդ փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Յ Ր Ի Է Լ Ե Ա Ն

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ
“ՀԱՅՔԻ”
1893 ԹՈՒՆԿԱԿՆՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

Պատրիարք Աղբեանի քաղաքականութիւնն.....	12
Ներսէս Պատրիարքի Ազգային Բաղաքականութիւնն.....	106
Մինաս Զերադի Ազգային Բաղաքականութիւնն.....	109
«ՀԱՅՔ»ի Ազգային Բաղաքականութիւնն.....	118, 135, 151
Բաղաքականութիւն Հայոց և Բաղաքականութիւն Օսմանցւոց.....	182
Հայոց Խնդիրն—Տեսութիւն Բարկայ..	199
	214
Ազգային Բաղաքականութիւն Հայոց—Տեսութիւն Խոռոյ.....	203
Հայաստանի Ինքնօրինութիւնն — Տեսութիւն Գոռոյ.....	231
Խրիմեան Հայրիկի Բաղաքականութիւնն.....	263
Հայոց Հօւրն.....	3
Արարկերի շարժումէն ինչօգուտ Ազգին.....	22
Զարնողին ձեռքն դալար.....	38
Մեր գործ և Մեր Գործիչք.....	40
Ահաւոր վիճակ Տաճկահայոց.....	71
Մեր գործ և գայն գործելու եղանակն (ոչ խմբագրական).....	76
Ազգային Ոգին մեր մէջ.....	66
Դիտական Ոգին մեր մէջ.....	294
Հայ դատն և Հայ Կուսակցութիւնք..	247
Դրան Բարբարոսութիւնն և յեղափոխութեան անհրաժեշտ հարկն....	264
Անկախ Լրագրութիւն և ազատ քննադատութիւն.....	278
Հայ Գործիչք և Հայոց Բաղաքականութիւն.....	280
Յայտարարութիւն «Հայքի» առ Հայ Հայրենասէրս ընդ հանուր.....	310
Պատասխանք առ Հնչակեան Թղթակիցս.....	327
Մեծ Ժողով Հայոց Ամերիկոյ (Վէպ) ..	329
Ուր է Հակասութիւնն.....	342
«Հայք» և Յեղափոխական Կուսակցութիւնք.....	343
Քաջալերական Իրողութիւնք .. .	359

ԳԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Գամառ Բաթիպա (պատկերալ).....	4
Գրիգոր Արծրունի.....	54
Ներսէս Վարժապետեան (պատկերալ) ..	87

ՔԵՐԲՈՒՆՔ

Օրորոցի երգ.....	5
Մշեցու Նոր Սերունդ.....	8
Վարդենիսցի Կնիկ.....	225
Թալանած Գեղ.....	

ԳՐԱԿԱՆ ԵՐԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հրապաշտութեան մնացորդներ Հայաստանի մէջ.....	9
Նուպարեան Բառարան Ֆռանսերէնէ Հայ-Աշխարհիկ և Հայերէն Նոր Բառեր.....	26
Ոտանաւոր գրեւ.....	29
Ակնցւոց Օրորի երգ.....	47
Ակնայ գաւառաբարբառն.....	156
Մեր Նոր գրողներն և արդի Հայերէն Լեզուն.....	169
Ե. Փիլիսոփայի գրական նշխարներէն.....	174
Ը տառն արդի Հայերէնի մէջ.....	187

ԱՄԵՐԻԿԱՆ ԶԱՅՅԵՐՆ

Ամերիկայի Հայերն ինչպէս կրնան հարստանալ.....	14
Ուստըրի Հայոց մէջ Յուդմունք.....	31
Ամերիկայի Հայերն վեց տարի առաջ և այժմ.....	45
Ամերիկայի Հայերն ցամաք ելնելէ առաջ ինչ քննութենէ կանցնին....	66
Ամերիկայի Հայերն Դպրոցներ կ'ուղեն հաստատել ի Հայրենիս.....	79
Ամերիկայի Հայերուն գործադուլն....	80
Ուստըրի Հայոց մէջ մեծ կռիւ մի....	93
Ամերիկայի Հայերն կրնան գործադուլ անել.....	95
Ուստըսի Հայոց Վերջին դէպքերն 123, 142	
Ամերիկայի Հայոց Թշուառ վիճակն....	126
Ամուսնութեան խնդիր....	159, 175, 192
Ապօրինի Գործեր.....	208
Խնդիր Ամերիկացի քաղաքացի լինելու.....	222
	272
Երկու Խօսք Հայրենիք Վերադառնալու մասին.....	237

Մնալ Յօտարութեան թէ Վերադառնալ Հայրենիք.....	254, 187
Ամերիկայի Հայերն ինչպէս առևտուր կ'անեն	255
Ամերիկայի Հայերն և օտար Անուններ	256
Միամեայ Հաշուեկշիռ Ելեւմտից Ս. Փրկիչ Եկեղեցւոյ յՈւստըր	257
Ամերիկայի Հայերն Բանին գին Կտրելով Օգտակար կ'ելլեն	270
Ամերիկեան քաղաքացւոց իրաւունքներն ի թուրքիա	320
Հայ Գործաւորք կը Հալածուին Օսլերնի Փողոցաց մէջ	321
Ամերիկեան Քաղաքացի Ընդունուած Անձանց Իրաւունքն Օտար Երկրաց մէջ	337
Օրէնք Միացեալ Նահանգաց Քաղաքացի Լինելու	350

Բ Ա Մ Ա Յ Ո Ւ Բ Ի Ն

Ալէքսանդրիայէ	287
Ամասիայէ	141
Բալուէն	252
Բարիգէ	297
Դահիրէէ	45, 113, 222, 252
Գաղատիայէ	219
Երուսաղէմէ	198
Իսկէնտէրունէ	269
Լորէնսէ	300
Խարբերդէ	32, 251
Կեսարիայէ	142, 335
Կ. Պոլսէ 21, 32, 61, 78, 92, 122, 168, 191, 235, 285, 349, 366	
Հալէպէ	13
Մալաթիայէ	92
Մարզուանէ	140
Մէլրէէն	348
Մշոյ	143
Նիշէ	321
Նիւ Եորքէ	350
Շիքակոյէ	43
Յափանց Եփրատայ	238, 249
Վանէ	13, 258, 335
Րուսչուքէ	11
Քալիֆօրնիայէ	224

Ձ Ա Յ Ձ Ա Յ

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահին Պատգամագրէն . . .	360
--	-----

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահին ուղղեալ Նամակն «ՀԱՅՔ»-ի	361
Ամերիկայի Հայեր և Բ. Դուռն . . .	367
Ամերիկացի Ջատագովք Հայկական Դատին	336
Ատենախօսութիւն Ներսէս Պատրիարքի	89, 102
Անգլիական Մանչեսթըր Կարախյըն Թերթն Հայոց Խնդրոյ մասին	265
Անգլիական Խորհրդարանն և Հայ դատապարտեալք	206
Դահիրէի Հայոց մէջ Յուդամունք	62
Դարեգին եպ. Սրուանձտեանցի Նամակն	43
Գրիգոր Արծրունւոյ ի պատիւ	47
Թան Լրագիրն և Հայ Դատապարտեալք	207
Ի Պատիւ Հայասէր Պրայսի	158
Խորհրդածութիւնք Հայոց Պատմութեան վերայ	318
Կոստանդնուպոլիս	338
Հայ Լրագրութեան Հարիւրամեայ յորեկեանն	134, 253, 274
Հայոց Ընդհանուր Ժողով ի Նիւ Եորք	301
Համառօտութիւն Մինաս Չերազի բանախօսութեան	267
«Հայք» 1894ին	319
Հնչակեան Պատուիրակ ի Նիւ Եորք ..	266
Մահադոյժ Գրիգոր Արծրունւոյ	2
Մահմետական Կրօնն Ամերիկացւոց ընծայոյ Ամերիկացին	65
Մարզուանի Յուդումներն	16
Մինաս Չերազ ի Նիւ Եորք	266
Մինաս Չերազի բանախօսութիւնն Ամերիկացւոց առջեւ	305
Մոլեգնեալ Խմբագիրն	73
Ն. Կարապետեանի քննադատութիւնն Մ. Չերազի ճառին	268
Նոր Հրատարակութիւնք 86, 187, 290, 325, 352	
Ողբի ձայն մ'ալ Ճաւայէ	17
Չարսանճագ (Հայաստան ինչպէս որ է) 347, 364	
Պատասխան Մ. Չերազի առ Ն. Կարապետեան	303
Սուլթան Համիա և Միւսիւլման Հաճիներ	350
Վախճան Գարեգին Եպիսկոպոսի . . .	15
Վախճան «Հայոց Հայրենասիրական Միութեան»	192
Յանկ Անուանց Հայ Դատապարտելոց	221
Յռանսա Առաջնորդ և Օրինակ Համայն Ազգաց	58